


Այս տեսակաւառակը կը ձօնուի նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի եւ 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան զոհ զացած բոլոր հայ մտաւորականներու նահատակութեան 95-ամեակին Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան Կողմէ



ÇANKIRI
Nüfus: 62600
Rakim: 750

AYAS
BELED

ՈՒՆՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

15 Սեպտեմբեր 2006

դէպի

ԶԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ

Pèlerinage du 15/09/2006 à CANKIRI et AYAS

Յարգանքի այցելութիւն 24 Ապրիլ 1915 ի
Հայ Ստաւորականներու Աքսորուած եւ
Նահատակուած Կեդրոնները

Ուխտագնացներ՝

Արմէն Արոյեան - Սարգիս Սերոյկեան

Պայծառ Կարդանեան

ՆԱՅԻՐԻ



NAÏRI



Թիի 270 ԵՐԵՎԱՆԻ 24 ԱՊՐԻԼ, 2007 (ԺԳ. ՏԱՐԻ) ۲۰۰۷ نيسان ۲۴ - ۲۷۰ عدد رقم

ՎԱՅԵ՞Լ Է ՀԱՅ ԱԶԳԻՆ...

ՀԱՅԵՐԸ [ԻՐՐ ԹԷ], ԱՄԷՆ ՏԱՐԻ, 24 ԱՊՐԻԼԸ
ԿԸ ՅԻՇԱՏԱԿԵՆ:

ԲԱՅՑ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ
ԻՆՉ ԸԼԼԱԼԸ ԱՄԷՆ ՈՔ ԼԱԻ ԳԻՏԷ՞

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ

ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ
ՎԱՅՐԵՐՈՒՆ՝ ՉԱՆՂԸՐԸ-ԻՆ ԵՒ ԱՅԱՇ-ԻՆ
ՈՒՐ ԳՏՆՈՒԵԼՆՈՒՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ,
ՇԱՏ ՀԱԻԱՆԱԲԱՐ, ՏԵՂԵԱԿ ՉԵՆ

ԵՂԵՈՆԻ ՏԱՐԻՆԵՐԸՆ ՅԵՏՈՑ՝ ՄԻՆՉԵԻ
ԱՅՍՕՐ, ՈՉ ՄԷԿ ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ՉԱՆՂԸՐԸ ԵՒ
ԱՅԱՇ ԳԱՅԱԾ ԵՒ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ
ԱՆՅԱՅՑ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ ԵՂՈՂ ԱՅԴ ՀՈՂԵՐՈՒՆ
ՎՐԱՅ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԸ ԿԱՏԱՐԱԾ Է

ՄԻՆՉԴԵՌ ՀՐԵԱՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ
«HOLOCAUST»-ԻՆ ՎԱՅՐԵՐԸ ԵՂՈՂ AUSCHWITZ-Ը,
DACHAU-Ն BUCHENWALD-Ը ԵՒ ՆՄԱՆ CAMP DE
CONCENTRATION-ՆԵՐԸ՝ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐՈՒ
ՎԵՐԱԾԱԾ ԵՆ

ԵՒ ՎԵՐՋԱՊԷ՛Ս...

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի ՄԵԾ ԵՂԵՈՆԸՆ
91 ՏԱՐԻՆԵՐ ՅԵՏՈՑ,
15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2006-Թ.ԻՆ՝
ՈՒՒՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Ի

ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՈԼԻՆԿԻՐԵԱՆ
[ՎՐԷԺ ՈՒԻՐԷՆԵԱՆ]

Մեր այս գրութիւնը կը ծօնենք՝ Արմէն Արոյեանից և իրեն ուղեցոյց երկու հայ ընկերներուն որոնք, Եղեռնէն յետոյ առաջին անգամ ըլլալով, ուխտագնացութեամբ մեկնեցան Չանղըրը և Այաշ:




Տխրահոջակ
Չանդըրը-ի
մուտքը
ուղեցուցող
նշանակը:



Արմեն
Արոյեանին
դէպի
Չանդըրը
կատարած
ուխտագնա-
ցութիւնը
պատմող
DVD-ին
առաջին
տեսանկարը:




Չանդըրը՝
Ռուբեն
Սեւակի,
Դանիէլ
Վարուժանի
և իրենց
մտաւորական
ընկերներուն
վերջին ...
հանգրուանը:



Չանդըրը-ի
բարձունքին
վրայի
փլատակ
բերդէն՝
ուխտագնաց
Արմեն Արոյեան
կը դիտէ
արիւնաթաթախ
քաղաքը:



Ահա՛ փլատակ բերդէն հին և նոր Չանդըրը-ի տեսարանը:



Եւ ուխտագնաց Արմէն Արոյեան Չանդըրը-ի բարձունքին վրայ, հոգեհանգիստ մը կատարած ըլլալու երկիւղածութեամբ կը կարդայ՝ Չանդըրը նահատակուած Ռուբէն Սեւակի ուղղուած դամբանականը, որուն կը հետեւի նահատակ-հերոս բանաստեղծին «Սրինգ» քերթուածին ընթերցումը:—

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ

Բուն անունով՝ Ռուբէն Չիլիկիւրեան: Ծնած է 1885-թ.ին, Սիլիվրի, բժշկութիւն ուսած՝ Լոզան, ապա աշխատած ու ստեղծագործած՝ Զուիցերիա և Պոլիս, ուր, 1915-ի Ապրիլ 24-ին ձերբակալուած է, հակառակ բանակի բժիշկի իր հանգամանքին, և խժոճութեամբ սպաննուած 200-է աւելի հայ մտաւորականներու հետ: Մեր նահատակ գրագէտներուն կրտսերագոյնը՝ Սեւակ, մեզի ժառանգ ձգած է «Սիրոյ Գիրքը», «Վերջին Հայերը», «Քառսը» և «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» երկերը:

**

Սիրոյ և յեղափոխաշունչ ապրումներու գրագէտ Ռուբէն Սեւակ, Թէև երիտասարդ, բայց կանոնիս հասկցար կեանքը և ըմբռնեցիր զայն, հասուն մարդու նման:

Տաղանդաւոր բժիշկ էիր, տարուած մարդասիրութեամբ, և իրաւամբ կիսած ու բաժնած դժբախտութիւնները՝ մարդ արարածին.

Դուն, որ արիութեամբ կը հակադրուէիր ամէ՛ն տեսակի անարդարութեան դէմ...: Այսօր քեզի կու գանք որ բերեմք մեր խո՛ր յարգանքը, մեր հիացումն ու սերը՝ քեզի հանդէպ, նահատակութեանդ վայրին, Չանդըրը-ի մէջ:

Դուն պարզ գրող մը չէիր, այլ՝ վաւերական բանաստեղծն ու արձակագիրը:

Դուն պարզ բժիշկ մը չէիր, այլ՝ նուիրեալ հասարակական գործիչը, որ 100 տարիէ ի վեր կը ներշնչէ մեր ժողովուրդի գրասէր սերունդները՝ հա՛շտ ապրելու իրենց ներքին անձին հետ, հանդուրժելու՝ միւսին և ընդունելու, սիրելու զայն:

Դուն, որ քու բժշկական դասախօսութիւններովդ լուսաւորած էիր հազարաւորներու միտքն ու կեանքը և անսակարկ ու անմնացորդ նուիրուած ազգիդ՝ քու արուեստովդ, կարողութիւններովդ ու գիտելիքներովդ:

Ազնուագո՛յն երիտասարդ Ռուբէն Սեւակ՝ դուն քու երեսուն տարու դեռատի կեանքդ զոհեցիր «Հայ» ըլլալու «Անցերելի յանցանք»իդ համար, վաղաժամօրէն թաղելով ձիրքերդ և սերերդ:

Կը խոնարհի՛նք քու անմոռաց և խնկելի յիշատակին առջ:

Յարգա՛նք քեզ...:

Ս Ր Ի Ն Գ

Ո՛վ խեղճ սրինգ, տարաբախտ ոստ,
Ան ո՞ր անգուլթ ձեռքն էր անտես,
Կամ ո՞ր կայծակն որոտընդոստ,
Որ խլեց, չորցուց քեզ ոսկրի պէս...


Մտեցո՛ւր կուրծքդ համբոյրիս,
Թող օծեն վէրքդ արցունքներս,

Գիտեմ պիտի չդալարիս,
Բայց կեա՛նք փչեմ երակէդ ներս...

Ո՛վ իմ սրինգ, ո՛ստ երկնատուր,
Չորցած կուրծքիդ ես տամ հոգիս,
Ու դուն ե՛րգ տուր, դուն վերե՛լք տուր,
Երկինքներ տուր հիւանդ շունչիս...:



Արիւնոտ
Չանդըրը-էն
հին
տուներ:



Հաւանաբար,
այս տուներուն
մէջ
քանի
մը ամիս
բնակեցան
մեր
տուրք
մտաւորական
նահատակները




Չանդըրը-ի մէջ հայ
ուղեւորը կը հարցնէ
զազրելի տեսքով
թուրքի մը.- Ո՞ւր է
Հայ եկեղեցին»:
«Սա փողոցին մէջն
էր, բայց հիմա
փլած է» կ'ըլլայ
պատասխանը: Այս
եկեղեցին մէջ է, որ
Կոմիտաս Կրդ. պա-
տարագեց, վերջին
անգամ, արտորեալ
մտաւորականներուն
համար:



Ո՛վ գիտէ...
թէ Չանդըրը-ի
այս տունը՝
1915-թ-ին
մեր սուրբ
ճահատակներէն
որո՞ւն վերջին
բնակարանը
եղած է:



Հին Չանդըրը-ն
և
իր նոր
բնակիչները:




Ո՛վ գիտէ...
մեր սուրբ
ճահատակները
քանի, քանի՛
անգամ ճայած
են
Չանդըրը-ի
այս
պատմական
աշտարակի
ժամացոյցին՝
ապագային
հայող
իրենց
յոյսերով և
մտահոգու-
թիւններով:



1915-թ.ին
այս
տուներուն մէջ
քանի մը ամիս
ապրած
մեր
տուրք
նահատակ-
ներուն
տեղ,
այսօր հոն
կը բնակի
ջարդարար
թուրքին
տիպարը եղող
ճիւղ մը:



24 Ապրիլ
1915-թ.ին
հայ
մտաւորական-
ներուն
սպանդանոցը
եղած Այաշ-ի
մէջ,
այսօրուան
քաղաքապե-
տութեան ցու-
ցատախտակը:



Դահլճներու
քաղաք
Այաշ-էն
հին շէնք մը:




Դահլճներու քաղաք՝
Այաշ-ի հին
«ANAVATAN»
կուսակցութեան
կեդրոնը: Հայերէն
թարգմանութեամբ՝
«Մայր Հայրենիք»
կոչուող այս
կուսակցութեան
անդամներուն մայր
հայրենիքը ո՞ր է
արդեօք-«Միջին Ասիոյ
տափաստանները»-:




Յեղասպան
թուրքին
խորհրդանիշը
եղող
Այազ-ի
հին
թաղամասին
տիրալուշ
«Մինարէ»ն:




Դահին քաղաք
Այազ-ի մէջ,
հին և նոր
շէնքեր
քով-քովի



Հին
Այազ-էն...
հին շէնքեր



Հին
Այազ-էն...
հին շէնքեր



Դահիճ քաղաք
Այաշ-էն
տեսարաններ:
Հայ արտորեայ
մտաւորական-
ները՝ այս
քաղաքին
փողոցներուն
մէջ պտրտելու
առիթ
չեն ունեցած:

**ՈՒՄՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ՝ ԴԵՊԻ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի
ՍՊԱՆԴԱՆՈՅԸ ԵՂԱԾ
ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱԾ:**

Ո՞Վ Է ՈՒՄՏԱԳՆԱՑ ԱՐՄԷՆ ԱՐՈՅԵԱՆ

Ասկէ տասը տարիներ առաջ էր. Լոզանի մէջ, ժընեւի Հոգետր Հոփի Դոկտ. Աբէլ Քահանայ Մանուկեան և գանատաբնակ Տիկ. Մարօ Մանաւեան մեզի նուիրեցին video-cassette մը, որուն վրայ մեր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը և թուրքերուն բարբարոսութիւններէն փրկուած, մեծ մասամբ կիսափրկատակ վիճակի մէջ եղող պատմական յուշարձանները դիտելու մեծ, բայց նաեւ տխրութեամբ պարուրուած հաճոյքը ունեցանք:

Տեսաերիզը պատրաստողը Լոս Անճելըս-աբնակ, նախկին Ճիպիւնցի ընտանիքի զաւակ՝ Արմէն Արոյեանն էր, որ ամէն տարի Ամերիկայէն դէպի Արեւմտեան Հայաստան ճամբորդութիւններ կը կազմակերպէր, որուն կը մասնակցէին կին եւ այր՝ շատ մը հայրենասէր հայեր: Եւ Արմէն Արոյեան այս ուղեւորութիւն-ուխտագնացութիւնները ինք կը նկարէր և կը ձայնագրէր:

Այս՝ դէպի մեր արմատները, դէպի մայր հայրենիք ճամբորդութիւններուն իբր ուղեցոյց, շատ անգամ կը մասնակցէին Մեսրոպ Արք. Աշճեանի և Դոկտ. Հրանդ Մարգարեանի նման հմուտ անձնաւորութիւններ, որոնք իրենց տուած բացատրութիւններով աւելի կ'իմաստաւորէին ու կ'արժեւորէին այս բնոյթի ուխտագնացութիւնները...:

Այս տեսաերիզը սկզբնաւորութիւն մը եղաւ. և մենք կապ հաստատեցինք Լ. Անճելըս-աբնակ Արմէն Արոյեանի հետ:

Եւ ան մեզի ուղարկեց դէպի Արեւմտեան Հայաստան կատարած գրեթէ բոլոր ուխտագնացութիւններուն տեսաերիզները:

Եւ այս ձեւով, առանց Հայաստան երթալու, ճանչցանք մեր բուն հայրենիքը, անոր ամէն մէկ քաղաքը, գիւղը և ամէն մէկ սուրբ յուշարձանը:

Եւ այս տեսաերիզներով առիթ ունեցանք տեսնելու և մտիկ ընելու այդ հողերուն վրայ ջարդերէն ճողոպրած տարեց հայերու խօսակցութիւնները:

Իրապէս ալ, մեր բարեկամին կատարածը՝ հայապահպանման օգտին եղած բացառիկ գործունէութիւն մըն էր: Անոր տեսաերիզները՝ Հայաստանի պատմական յուշարձանները ձեւով մը փրկեցին թուրքերուն կողմէ բոլորովին բնաջնջուելէ:

Եւ այդ վիտէօներու շնորհիւ հայկական պատմական յուշարձանները և վայրերը անմահացան:

Բայց այս բոլոր տեսաերիզներուն մէջ պակաս բան մը կար, որ երկար ատեն ի վեր մեր միտքը կը չարչրկէր:

Ինչո՞ւ 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող Չանդըրը-ի և Այաշ-ի մասին, մինչեւ այսօր ոչ մէկ նկար, ոչ մէկ տեղեկութիւն և մանաւանդ՝ ոչ մէկ տեսաերիզ գոյութիւն ունեցած է:

Մինչդեռ հրեաները իրենց «HOLOCAUSTE»-ին կատարուած բոլոր վայրերը՝ AUSCHWITZ-ը, DACHAU-ն և BUCHENWALD-ը և նման CAMP DE CONCENTRATION-ները սրբատեղիներու վերածած են:

Իսկ մենք Չանդըրը-ն և Այաշ-ը ոչ միայն սրբատեղիի վերածած չէինք, այլ՝ նոյնիսկ հայ կրօնական մը, մինչեւ այսօր, Չանդըրը և Այաշ չէ համարձակած երթալ և նահատակ մտաւորականներուն անյայտ գերեզմանոցը եղող այդ հողերուն վրայ աղօթք մը մըմնջել...:

Այս մտասէւեռումներով դիմեցինք Արմէն Արոյեանին և իրմէ խնդրեցինք, որ իր ուխտագնացութիւնը ամբողջացնէ և մինչեւ հիմա ոչ մէկ կրօնականի և նաեւ աշխարհականի կողմէ չայցելուած, 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող՝ Չանդըրը և Այաշ ուխտագնացութեան երթայ...:

Մեր ուղեգնաց ազգակիցը շատ ճիշդ գնահատելով այս ուխտագնացութեան կարեւորութիւնը՝ սիրով ընդունեց մեր առաջարկը...

Եւ 15 Սեպտեմբեր 2006-թ.ին, ինք և իր երկու հայ ուղեցոյցները ինքնաշարժով Պոլիսէն ճամբայ ելան դէպի առաջին սպանդանոց՝ Չանդըրը...

Չանդըրը-ի հին քաղաքը պտըտելէ և նկարահանելէ յետոյ, մեր ուխտագր-նաց, յանդուգն բարեկամը, իր երկու ուղեցոյցներով կը դիմեն Չանդըրը-ի բար-ձունքը գտնուող պատմական բերդը, ուրկէ ինք իր հայեացքը կ'ուղղէ դէպի վար, հին Չանդըրը-ի տնակ-բնակարանները, ուր քանի մը ամիս բնակած էին մեր նահատակ մտաւորականները: Եւ հոգեհանգիստ մը կատարելու ինքնամփոփու-մով և երկիւղածութեամբ կը կարդայ Չանդըրը-ի մէջ նահատակուած Ռուբէն Սեւակի մասին իր հոգեյոյզ դամբանականը և կ'ընթերցէ նոյնքան թախծալից մէկ քերթուածը հերոս-նահատակ բանաստեղծին:

Ուխտագնացները կը փնտռեն նաեւ երբեմնի Հայկ. եկեղեցին: «Հոս էր, այժմ քանդուած է»-կը պատասխանուի: Հոն էր, որ Կոմիտաս Վրդ., աքսորէ վերադար-ձէ առաջ, պատարագած էր տարագիր հայ մտաւորականներուն համար, որոնց մասին Յովհան Ծ. Վ. Կարսպետեան պիտի վկայէր յետագային... *Մատուռին դա-սին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր Տօթթ. Չիլինկիրեան: Կը զգայի, թէ ինք, այդ վայրկեանին կը մարմնացնէր մեր ցեղին հաւատքի դիւցազնու-թիւնը: Երկիւղի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեան մէջ: Սեւակ առաջինը եղաւ Ս. հաղորդութիւն ճաշակող: Չեմ կրնար մտքէս հե-ռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր յաղթական կաղնիին, որուն բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները...»:*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» - 1922-թ.

* *

Մեր ուխտաւոր հայրենակիցը և իր երկու հայ ուղեցոյցները, հոգեպէս շատ ընկճուած վիճակով կը բաժնուին Չանդըրը-էն և կ'երթան դէպի 24 Ապրիլ 1915-թ.ի երկրորդ սպանդանոցը եղող Այաշ քաղաքը...

Այաշ աքսորուած հայ մտաւորականները այնտեղ շատ ծանր պայմաններու մէջ գտնուած էին, քանի որ, բոլորն ալ մնացին բանտարկուած: Իրենց արգիլած էին դուրս գալ: Եւ Այաշ աքսորուած հայ մտաւորականներէն շատ քիչեր Պոլիս վերադարձան: Գրեթէ, բոլորն ալ, նահատակուեցան...

Եւ այս անիծեալ Այաշ-էն Արոյեան և իր ընկերները, ինքնաշարժով Պոլիս վերադարձի ճամբուն վրայ, ինքզինքնին շատ սիրելի անձի մը յուղարկաւորու-թենէն վերադարձողի հոգեվիճակի մէջ զգացեր են:

* *

Մենք կը հաւատանք, որ Արմէնի և իր ընկերներուն Չանդըրը և Այաշ կա-տարած ուխտագնացութիւնը՝ պատմական բացառիկ ձեռնարկ մըն է...

Եւ մենք ունինք այսօր Չանդըրը-ի և Այաշ-ի սպանդանոցներու նկարները: Եւ ունինք մանաւանդ՝ այս ուխտագնացութիւնը յաւերժացնող տեսաերիզը՝ DVD-ն:

Հազար շնորհակալութիւն՝ քեզի և ընկերներուդ՝

Սիրելի Արմէն Արոյեան:

Գիտակից հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊՈԼԻՏԵԿՆԻԿ

ՌԻՍԱԳԱՅՈՒԹԵՆԸ
ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

